

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. հոկտեմբերի 30-ի

նիստի /արձ.4/

1. Հաստատել և գործողության մեջ դնել «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողների ներքին կարգապահական կանոնները» (ներկայացված նախագծից հանել 2.9 և 4.3 կետերը):
2. Հիմք ընդունելով ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2013թ. օգոստոսի 30-ի նիստի որոշման 2.2 կետը՝ առկա և հեռակա ուսուցման 2014-2015 ուս. տարվա ներքոհիշյալ մասնագիտական ուսումնական պլաններում կատարված փոփոխությունները համարել վավերական և հաստատել՝

ա) առկա ուսուցում

1. 070200 Դերասանական արվեստ
2. 070300 Ռեժիսուրա
3. 070400 Թատերագիտություն
4. 071300 Կինոարվեստ
5. 071400 Օպերատորություն
6. 071700 Սոցիալ-մշակութային գործունեություն
7. 071900 Գեղանկարչություն
8. 070700 Պարարվեստի ռեժիսուրա
9. 070600 Պարարվեստ
10. 072500 Կինոգիտություն
11. 071200 Գրական ստեղծագործություն

բ) հեռակա ուսուցում

1. 071300 Կինոարվեստ
2. 071400 Օպերատորություն
3. 070700 Պարարվեստի ռեժիսուրա
4. 070600 Պարարվեստ

2.1 հաստատել 070700 « Պարարվեստի ռեժիսուրա» մասնագիտության առկա ուսուցման 2015-2016 ուս. տարվա ուսումնական պլանը,

2.2 հաստատել ներքոհիշյալ մասնագիտությունների հեռակա ուսուցման 2015-2016 ուս. տարվա ուսումնական պլանները

1. 070300 Ռեժիսուրա
2. 070700 Պարարվեստի ռեժիսուրա
3. 071700 Սոցիալ-մշակութային գործունեություն
4. 070400 Թատերագիտություն

3. Հաստատել «ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ»-ը:

4. Հիմք ընդունելով ԵԹԿՊԻ-ի կանոնադրության 31-րդ կետը՝ ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2014թ. օգոստոսի 25-ի նիստի որոշման 6-րդ կետում «ենթակառուցվածքային» բառը փոխարինել «կառուցվածքային» բառով և այսուհետ Կարիերայի կենտրոնը համարել ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում,

4.1 հիմք ընդունելով սույն որոշման 4-րդ կետը՝ ԵԹԿՊԻ-ի կարիերայի կենտրոնի կանոնադրությունում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ԵԹԿՊԻ-ի կարիերայի կենտրոնը (այսուհետ՝ կկ) հանդիսանում է ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում, որի հիմնական նպատակն է նպաստել աշխատաշուկայում ԵԹԿՊԻ-ի ուսանողների և շրջանավարտների մրցունակությանը, խթանել շրջանավարտների և ինստիտուտի միջև մշտական կապի ամրապնդումը և համագործակցության զարգացումը»:

5. ղեկավարվելով ԵԹԿՊԻ-ի կանոնադրության 22-րդ կետով՝ հաստատել ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ,

5.1 ուժը կորցրած ճանաչել 2014թ. հունիսի 24-ին ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի կանոնակարգը,

5.2 սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6. Արձանագրել, որ գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

6.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

6.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի բ) ենթակետի համաձայն ձայների մեծամասնությամբ (28 կողմ, 2 դեմ) մանկավարժական գիտությունների թեկնածու Հակոբ Գրիշայի Զիլֆիմյանին շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԳ. 00.05 «Մոցիալ-մշակութային գործունեության տեսություն և կազմակերպում» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

7. Դ. Մուրադյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան